



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՊՆԱԿԱՏԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

12 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 115

Ձեռնարկողը՝

<<Քալոյան>> ՍՊԸ

Գեղարքունիքի մարզի,
Ձորագյուղ համ. 1 փող. տուն 46

Գործունեությունը՝

**Ձորագյուղի (Ծակքարի) պեոլիտային ավազի հանքավայրի
2-րդ փեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Գեղարքունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՊԿ-ի
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 115

«28» 12 2018թ.

Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	<<Քալոյան>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Ձորագյուղ համայնք

Ձորագյուղի պեռլիտային ավազների հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզում Ծակքար, Ձորագյուղ և Վարդաձոր գյուղերի միջև:

Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի մշակման համար ընտրված տեղամասի սահմաններում՝ 2.51հա, /նախկինում հատկացված 1,8 հա-ի փոխարեն/, օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են 227 340մ³ ծավալ: Հանքավայրի տեղամասը շահագործվում է 2005թ-ից:

Պաշարները հաստատված են ՀԽՍՄ Երկրաբանական վարչության ՊՏՀ-ի 1976թ-ի նոյեմբերի 3-ի թիվ 232 արձանագրությամբ:

Հանքավայրի օգտակար հանածոն դիտարկվել է որպես ծակոտկեն լցանյութ, համաձայն ԳՊ 9757-73 "Заполнители пористые неорганические для легких бетонов. Классификация и общие технические требования" ГОСТ-3 պահանջների:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, հանքավայրի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- Ամենամեծ երկարությունը – 202մ,
- Ամենամեծ լայնությունը – 186մ,
- Մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.54մ,
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 31.3մ,
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 227.34հազ.մ³,
- Օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը՝ - 198.0հազ.մ³,
- Մակաբացման ապարների քանակը – 5480մ³:

Հանքավայրի մշակման ընթացքում առաջանում են կորուստներ, որոնք մնում են բացահանքի կողերում՝ 29340մ³ կամ 12.9%:

Հանքավայրի բացումը կիրականացվի նրա 1987.0մ բարձրության հորիզոնից: Հանքավայրի հյուսիսային մասով անցնող ավտոճանապարհից նախատեսվում է 53մ երկարությամբ 8մ լայնությամբ ավտոճանապարհի կառուցում, դեպի բացահանքի բացման առաջին հորիզոն՝ 1987.0մ բարձրության հորիզոն, որն աստիճանաբար փոփոխելով թեքությունը կհասնի 1982.0-1977.0մ բարձրության հորիզոնին: Հանքավայրի մուտքը նախատեսվել է նրա արևելյան մասից:

Հաջորդ 1972.0-1952.0մ բարձրության հորիզոնները մշակվում են հանքավայրի արևելյան կողմից: Հանքաստիճանների բարձրությունն ընդունված է 5մ:

Հանքավայրի մշակումը նախատեսվում է կատարել առանց հորատապայթեցման աշխատանքների, համատարած վերևից ներքև հանվող շերտերով՝ մշակման համակարգով: Ընդունված համակարգի տարրերն են.

- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 5մ,
- հանքաստիճանի թեքության անկյունը՝ 55 °,
- հանքակողերի թեքության անկյունը՝ 45°,
- անվտանգության առափնեի /բերմա/ լայնությունը՝ 2մ:
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 30մ:

Բացահանքում արդյունահանումը կատարվում է առանց հորատապայթեցման աշխատանքների էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնային համալիրի միջոցով: Փխրեցված ապարների տեղափոխումը դեպի գոյություն ունեցող 0.5կմ հեռավորության վրա գտնվող ՋՏԿ կատարվելու է ԴՕ-28 բարձիչի միջոցով:

Բացահանքից պենզային ավազի տեղափոխումը, մինչև գոյություն ունեցող ջարդող տեսակավորող կայանք, որը տեղադրված է բացահանքի սահմաններում՝ բացահանքի արևելյան՝ նախկինում արդյունահանված հատվածում՝ 0.5կմ հեռավորության վրա, նախատեսվում է իրականացնել ԽՐԸԻ-256ը ավտոինքնաթափերով:

Բացահանքի մակաբացման ապարներն են ժամանակակից պրոլյուվիալ-դելյուվիալ նստվածքները՝ հողաբուսական ու պեռլիտի և այլ էֆֆուզիվ ապարների կտորներ: Այդ ապարների միջին հզորությունը բացահանքում կազմում է 0.54մ:

Հանքավայրի շահագործման սկզբնական շրջանում մակաբացման ապարները ավտոինքնաթափով կտեղափոխվեն և կտեղադրվեն բացահանքի ներսում՝ նրա հարավ-արևելյան մասում, նախկինում արդյունահանված տարածքում՝ N1 լցակույտ: Շահագործման 20-րդ տարվանից սկսած N1 լցակույտում եղած մակաբացման ապարների 4720մ³ ծավալը աստիճանաբար կտեղափոխվի և կլցվի արդեն արդյունահանված տարածքի՝ 1962.0մ – 1957.0մ բարձրության հորիզոնների վրա, 0.4մ բարձրությամբ և կհարթեցվեն, ստեղծելով ներքին լցակույտառաջացում:

Շահագործման ավարտից հետո նախատեսվում է խախտված հողերի վերականգնում, որի ժամանակ մակաբացման ապարների մնացած մասը՝ 760մ³ ծավալը կտեղափոխվի 1957մ բարձրության հորիզոնի 1550մ² մակերեսի վրա և կհարթեցվի:

Մակաբացման ապարների հաշվարկային ընդհանուր ծավալը կազմում է 5480մ³, լցակույտի ընդհանուր ծավալը՝ 6580մ³:

Լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 1820մ² միջին բարձրությունը՝ 3.0մ: Հորիզոններից մակաբացման ապարները ավտոինքնաթափով բարձվելու և տեղափոխվելու է բացահանքի հարավային մասում ստեղծված N1 լցակույտ և բուլդոզերի օգնությամբ փռվում է:

Նախատեսված է բուլդոզերային լցակույտառաջացում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում նախ բացահանքի հատակում կփռվեն ժամանակակից առաջացումները, ապա դրանց վրա պայմանական հողային շերտը: Ներքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 1.51հա: Վերականգման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 1.51հա: Ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ գումարը հաշվարկված



է 1493.5հազ. դրամ: 1,51հա տարածքի համար նախատեսված է նաև կենսաբանական ռեկուլտիվացիա, որի համար նախատեսված է 302000 ՀՀ դրամ:

Տրամադրվող պաշարները կարդյունահանվեն 28.28 տարում:

Օգտակար հանածոյի տարեկան արտադրողականությունը, շահագործման տարվանից սկսած հաստատուն է և ընդունված է 7000մ³:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակայանների ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ԽԿ-002 մակնիշի ջրցան-վազող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ՄԾ-ըԾը-1.4 ջրի ցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

Բացահանքում գետնաջրերը բացակայում են: Բացահանքի տարածքը թափվող մթնոլորտային տեղումները ներծծվում են բացահանքի հատակի ապարների ճաքերի և ծակոտիների միջով:

Կենցաղային կեղտաջրերը ջրցուղարանից ինքնահոս կերպով թափվում են 25.0մ³ տարողությամբ բետոնապատ պատերով արտաքնոցի հորը, որտեղից էլ աղբահան մեքենայով պարբերաբար հեռացվելու են պայմանագրային կարգով:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի շրջանում պատմության և մշակույթի հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն՝ թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը ապահովելու նպատակով:

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Փոշենստեցման նպատակով ճանապարհներին նախատեսվում է ջրցանում՝ տարվա չոր և շոգ օրերին:

- Մեքենաների աշխատանքի ժամանակ, սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում՝ վնասակար նյութերի արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով: Մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսքի վերահսկում և կանխում:

- Օգտագործվող ագրեգատների և սարքավորումների սարքին վիճակում աշխատեցում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Խախտված տարածքի ռեկուլտիվացիա:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ:

- Արտադրական հրապարակի տարածքը նավթամթերքների աղտոտումից զերծ պահելու նպատակով տարին մեկ անգամ հողերի աղտոտվածության մշտադիտարկում: Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:



Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Գեղարքունիքի մարզ, Ձորագյուղ համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Առկա է <<Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության>> փորձաքննության դրական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Քալոյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դոնոյան

Մասնագետ

Ջ. Ջուռնաչյան

